ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

<<10>> հոկտեմբերի 2017թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 2036/03

Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս ներկայացնելով <<ԿՈՄՊԹԱՈՒՆ>> ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների <<ԿՈՄՊԹԱՈՒՆ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01561955, հասցե՝ ք. Երևան, 16 թղմ. 44 - 131, պետական գրանցման համար՝ 282.110.05972) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով <23> սեպտեմբերի 2017թ.-ի դրությամբ չկատարված պարտավորությունը կազմել է 743.923 դրամ, որից ապառք՝ 343.454 դրամ, տույժ՝ 399.145 դրամ, տուգանք՝ 1.324 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ 743.923 դրամ չկատարված պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին <25> սեպտեմբերի 2017թ.-ին <<ԿՈՄՊԹԱՈՒՆ>> ՍՊԸ-ի տնօրենը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն վարույթի նյութերին ծանոթանալու համար չի ներկայացել և որևէ բացատրություն չի տվել:

Արդյունքում ժամանակին չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 743.923 դրամ, որից՝

Շրջանառության հարկի գծով պարտավորությունը կազմում է 17.784 դրամ որից ապառք՝ 11.715 դրամ, տույժ՝ 6.069 դրամ, որն առաջացել է 2016թ. 1-ին և 3-րդ եռամսյակների հաշվարկներից:

Եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմում է 726.139 դրամ որից ապառք՝ 331.739 դրամ, տույժ՝ 393.076 դրամ, տուգանք՝ 1.324 դրամ, որն առաջացել է 2015թ. հոկտեմբերից դեկտեմբեր, 2016թ. հունվարից դեկտեմբեր, 2017թ. հունվար, փետրվար ամիսների հաշվարկներից, 2014թ մայիս ամսվա հաշվարկը ուշ ներկայացնելու համար հաշվարկված տուգանքից, իսկ տույժերի հաշվարկը՝ 2013թ. հունվարից մինչև 2017թ. փետրվար ամիսների հաշվարկներից :

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր:

<<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է:

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ **սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման**:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 29[1], <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 11-րդ մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. <<ԿՈՄՊԹԱՈՒՆ>> ՍՊԸ-ից գանձել 743.923 դրամ պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակն եռօրյա ժամկետում ուղարկել /ֆիզ. անձին կամ/ հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ Վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Հետացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ. Անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ ԻՎ ՀԳ բաժին,
Գլխավոր մասնագետ
Մ. Գրիգորյան, հեռ.011 549182